

## ԳՈՐԾԵԼԱԿԱՐԳ

### ՄԻՋԻՆ ԾԱՆՐՈՒԹՅԱՆ ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍԱՅԻՆ ՀԻՎԱՆԴՈՒԹՅԱՄԲ (COVID-19) ՄԵԾԱՀԱՍԱԿ ՊԱՑԻԵՆՏԻ ՎԱՐՄԱՆ

1. Նոգոլոգիաների խումբ՝ ըստ հիվանդությունների և առողջության հետ կապված խնդիրների վիճակագրական 10-րդ վերանայման դասակարգչի.

| Հ/Հ | Կոդը  | Անվանում                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                             |
|-----|-------|--------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|
| 1)  | U07.1 | <p><b>COVID-19, վիրուսը նույնականացված է</b></p> <p>Սույն ծածկագիրը կիրառել այն դեպքում, երբ COVID-19-ը հաստատվել է լաբորատոր հետազոտություններով՝ անկախ կլինիկական նշաններից և ախտանիշներից: Թոքաբորբի կամ վարակի այլ արտահայտությունները նշելու անհրաժեշտության դեպքում կիրառել լրացուցիչ ծածկագիր:</p> <p><b>Բացառությամբ՝</b></p> <p>Կորոնավիրուսային վարակ՝ չճշտված (B34.2) Կորոնավիրուսը՝ որպես այլ դասերում դասակարգված հիվանդությունների պատճառ (B97.2) Ծանր սուր շնչառական համախտանիշ (ԾՄՇՀ)՝ չճշտված (U04.9)</p>                                                           |
| 2)  | U07.2 | <p><b>COVID-19, վիրուսը նույնականացված չէ</b></p> <p>Սույն ծածկագիրը կիրառել այն դեպքում, երբ COVID-19 ախտորոշված է կլինիկորեն կամ համաճարակաբանորեն, սակայն լաբորատոր հետազոտությունները համոզիչ չեն կամ անհասանելի են: Թոքաբորբի կամ վարակի այլ դրսևորումները նշելու անհրաժեշտության դեպքում կիրառել լրացուցիչ ծածկագիր:</p> <p><b>Բացառությամբ՝</b></p> <ul style="list-style-type: none"> <li>● Կորոնավիրուսային վարակ՝ չճշտված (B34.2)</li> <li>● COVID-19</li> <li>✓ Հաստատված է լաբորատոր հետազոտություններով (U07.1)</li> <li>✓ հատուկ սկրինինգ-դիտարկում (Z11.5)</li> </ul> |

|  |  |                                                                               |
|--|--|-------------------------------------------------------------------------------|
|  |  | ✓ կասկածվում էր, սակայն բացառված է լաբորատոր բացասական արդյունքներով (Z03.8): |
|--|--|-------------------------------------------------------------------------------|

2. Նոզոլոգիաների խումբը կիրառելի է՝ ըստ սույն հավելվածով սահմանված Ձև 1-ի.

Ձև 1

|    |                                                             |                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                   |
|----|-------------------------------------------------------------|-------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|
| 1) | Տարիքային խումբ                                             | Մեծահասակ                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                         |
| 2) | Սեռ (արական, իգական)                                        | Արական, իգական                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                    |
| 3) | Բարդություններ (առանց բարդությունների բարդություններով (Բ)) | (ԱԲ), ԱԲ                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                          |
| 4) | Հիվանդության փուլը (նկարագրել)                              | <p><b>1. Կորոնավիրուսային հիվանդության (COVID-19) ծանրության բնորոշում.</b></p> <p>1) <b>Ծայրահեղ ծանր COVID-19</b> - Բնորոշ է սուր շնչառական դիսթրես համախտանիշի (ARDS), սեպսիսի, սեպտիկ շոկի կամ այլ կյանքի պահպանմանը ուղղված (life-sustaining) միջոցառումներ պահանջող իրավիճակների առկայություն.</p> <p>2) <b>Ծանր COVID-19</b> - Սահմանվում է թոքաբորբի կլինիկական դրսևորումներով (տենդ, հազ, հևոց) և հետևյալ նշաններից մեկի առկայությամբ՝</p> <p>ա. արյան թթվածնով հագեցվածությունը <math>SpO_2 \leq 93\%</math>,</p> <p>բ. շնչառության հաճախականությունը <math>\geq 30</math> շնչ/ր,</p> <p>գ. 24-48 ժամվա ընթացքում թոքային դաշտի <math>&gt;50\%</math> ընդգրկող ինֆիլտրատներ թոքերում:</p> <p>3) <b>Ոչ ծանր COVID-19</b> - Սահմանվում է ծանր կամ ծայրահեղ ծանր ընթացքի նշանների բացակայությամբ՝</p> <p><b>ա. Թեթև COVID-19՝</b> Ախտանշաններ ունեցող պացիենտն է, ով համապատասխանում են COVID-19-ի դեպքի ստանդարտ բնորոշմանը, առանց վիրուսային թոքաբորբի նշանների և հիպօքսիայի,</p> <p><b>բ. COVID-19-ի միջին ծանրության՝</b> դեռահաս կամ չափահաս պացիենտն է, ում մոտ առկա են թոքաբորբի կլինիկական նշաններ (տենդ, հազ, հևոց, արագացած շնչառություն), սակայն բացակայում են ծանր թոքաբորբի նշանները, այդ</p> |

|    |                                                                                                                                                                                 |                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                               |
|----|---------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|-------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|
|    |                                                                                                                                                                                 | <p>թվում՝ արյան թթվածնով հագեցվածություն (<math>SpO_2</math>) <math>\geq 93\%</math> սենյակային օդի պայմաններում:</p> <p><b>2.Ծանոթություն՝</b> 93% թթվածնով հագեցվածության շեմը՝ ծանր COVID-19-ը սահմանելու համար պետք է զգուշությամբ մեկնաբանվի հիվանդության ծանրությունը որոշելիս: Անհրաժեշտ է կլինիկական դատողություն որոշելու, թե արդյոք թթվածնի ցածր հագեցվածությունը COVID-19-ի ծանրության նշան է, թե նորմալ է թոքերի քրոնիկ հիվանդությամբ պացիենտի համար: Նմանապես, անհրաժեշտ է մեկնաբանել սենյակի օդում <math>SpO_2</math>՝ 90-94%, որպես ծանր հիվանդության վաղ նշան, թոքերի նորմալ ֆունկցիայով պացիենտների մոտ:</p> |
| 5) | Բժշկական օգնության և սպասարկման պայմանները /բժշկական կազմակերպությունից դուրս, արտահիվանդանոցային պայմաններում, ցերեկային ստացիոնարի պայմաններում, հիվանդանոցային պայմաններում/ | Հիվանդանոցային պայմաններում                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                   |
| 6) | Բժշկական օգնության և սպասարկման ծառայությունների մատուցման ձևը /շտապ, անհետաձգելի, պլանային/                                                                                    | Անհետաձգելի, շտապ                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                             |
| 7) | Կիրառման շրջանակը (նշել մասնագետների շրջանակը)                                                                                                                                  | Վարակաբան (ինֆեկցիոն հիվանդությունների մասնագետ), թերապևտ, թոքաբան                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                            |
| 8) | <b>Գանգատներ</b>                                                                                                                                                                | Պացիենտների մեծ մասի մոտ զարգանում է տենդ, հազ, հոգնածություն, ախորժակի բացակայություն, հևոց, մկանացավ: Նկարագրվել են նաև այլ ոչ սպեցիֆիկ դրսևորումներ՝ ցավ կոկորդում, քթի լցվածության զգացողություն, գլխացավ, փորլուծություն, սրտխառնոց և փսխում: Հաղորդվել է նաև հոտառության կորստի (անոսմիա) կամ համի զգացողության կորստի (ագեզիա) մասին, որոնք նախորդում են շնչառական ախտանշանների զարգացմանը:                                                                                                                                                                                                                            |

|     |                         |                                                                                                                                                                                                                                                                                                                             |
|-----|-------------------------|-----------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|
|     |                         | Տարեցները, և հատկապես իմունասուպրեսիվ վիճակում գտնվող անձիք կարող են ունենալ ատիպիկ ախտանշաններ՝ հոգնածություն, արգելակվածություն/ շշմածություն, շարժունակության նվազում, փորլուծություն, ախորժակի կորուստ, դելիրիում և տենդի բացակայություն:                                                                               |
| 9)  | Անամնեզ                 | 1. Համաճարակաբանական անամնեզ՝ COVID-19 հաստատված անձի/անձանց հետ շփում կամ օջախում գտնվելը:<br>2. Պատվաստման առկայություն/ բացակայություն:                                                                                                                                                                                  |
| 10) | Զննման արդյունք/Ցուցում | Պացիենտի զննում և ֆիզիկական տվյալների գրանցում՝<br>1. մարմնի ջերմաստիճան.<br>2. գիտակցություն.<br>3. արյան թթվածնով հագեցվածություն՝ SpO2 %-ին (պուլսօքսիմետրով չափում).<br>4. շնչառության հաճախականություն/րոպեում.<br>5. զարկերակային ճնշում, երակազարկ.<br>6. մաշկի, լորձաթաղանթների փոփոխություն.<br>7. դիուրեզ և այլն: |
| 11) | Հոսպիտալացման ցուցում   | Համաձայն Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 2013 թվականի դեկտեմբերի 17-ի թիվ 81-Ն հրամանով հաստատված չափորոշի:                                                                                                                                                                                               |

3. Բժիշկ-մասնագետի կողմից զննումը, խորհրդատվությունը իրականացվում է ըստ Ձև 2-ի (անհրաժեշտության դեպքում անհրաժեշտ է նշել հիվանդության փուլերը)։

**Ձև 2**

**Բժիշկ-մասնագետի կողմից զննում, խորհրդատվություն  
(անհրաժեշտության դեպքում նշել հիվանդության փուլերը)**

| Հ/հ | Խորհրդատվության տեսակը                                  | Տրամադրման քանակը |   |
|-----|---------------------------------------------------------|-------------------|---|
|     |                                                         | ԱԲ                | Բ |
| 1)  | Սրտաբան                                                 | 0.6               | - |
| 2)  | Ինտենսիվ թերապիայի մասնագետ (Անեսթեզիոլոգ-ռեանիմատոլոգ) | 0.2               | - |

|     |                                          |      |   |
|-----|------------------------------------------|------|---|
| 3)  | Ներգատաբան (Էնդոկրինոլոգ)                | 0.4  | - |
| 4)  | Նյարդաբան                                | 0.3  | - |
| 5)  | Վիրաբույժ (ներառյալ՝ անոթային, կրծքային) | 0.2  | - |
| 6)  | Երիկամաբան (Նեֆրոլոգ)                    | 0.1  | - |
| 7)  | Արյունաբան                               | 0.1  | - |
| 8)  | Ֆթիզիատր                                 | 0.2  | - |
| 9)  | Ուռուցքաբան                              | 0.02 | - |
| 10) | Ռևմատոլոգ                                | 0.02 | - |
| 11) | Քիթ-կոկորդ-ականջաբան (ՔԿԱ)               | 0.02 | - |
| 12) | Մանկաբարձ-գինեկոլոգ                      | 0.02 | - |

#### 4. Սույն հավելվածի Ձև 2-ում նշված՝

1) տրամադրվող քանակների համար նշվում է միջինացված ցուցանիշ, նկատի ունենալով տվյալ զննման, խորհրդատվության իրականացման հաճախականությունը: Հաճախականության հաշվարկման միավորը պետք է լինի 0-ից 1 միջակայքում և հաշվի առնի նմանատիպ 100 դեպքերում տվյալ զննման, խորհրդատվության իրականացման հաճախականությունը:

2) ուղեկցող հիվանդությունների և (կամ) բարդությունների զարգացման կամ կասկածի դեպքում անհրաժեշտ է կազմակերպել համապատասխան մասնագետի խորհրդատվություն կամ ուղղորդել համապատասխան մասնագետի խորհրդատվության:

#### 5. Լաբորատոր-գործիքային ախտորոշիչ հետազոտություններն իրականացվում են՝ ըստ Ձև 3-ի, ընդ որում.

1) COVID-19-ի ախտորոշման համար խորհուրդ է տրվում օգտագործել Նուկլեինաթթվի ամպլիֆիկացիայի թեստեր (NAAT, օր՝ ՊՇՌ).

2) այն դեպքերում, երբ NAAT-ն անհասանելի է, հակազենի (Ag) թեստը կարող է ներառվել ախտորոշման ալգորիթմում.

3) ախտորոշումը հաստատելու համար կարող է անհրաժեշտ լինել վերին շնչուղիների (URT) և/կամ ստորին շնչուղիների (LRT) 1-ից ավել թեստավորում:

4) ախտանիշների առաջացման առաջին շաբաթվա ընթացքում վերին շնչուղիների (URT) նմուշներում սովորաբար առկա է լինում վիրուսային համեմատաբար բարձր ծանրաբեռնվածություն.

5) ստորին շնչուղիների (ի համեմատ վերին շնչուղիների) նմուշները ավելի հավանական է, որ դրական լինեն հիվանդության առաջին շաբաթից հետո.

- 6) SARS-CoV-2 նկատմամբ հակամարմինների որոշումը խորհուրդ չի տրվում COVID-19-ի ախտորոշման համար.
- 7) կարևոր է համակցված վարակների ախտորոշումը և բուժումը, ինչպիսիք են շնչառական վիրուսային, բակտերիալ վարակները կամ էնդեմիկ հիվանդությունները, օր՝ տուբերկուլյոզը, որոնք կարող են տենդով ուղեկցվող հիվանդության պատճառ լինել.
- 8) պացիենտները պետք է հետազոտվեն շնչառական այլ հարուցիչների նկատմամբ՝ առաջնորդվելով երկրում ընդունված կլինիկական վարման ուղեցույցներով: Օրինակ, կախված համաճարակաբանական իրավիճակից և կլինիկական դրսևորումներից, կարող են կատարվել այլ վիրուսների հետազոտություններ՝ գրիպի A և B, ռեսպիրատոր-սինցիտիալ, պարադրիպի, ռինովիրուսի, ադենովիրուսների, էնտերովիրուսների, մարդու մետապնևմավիրուսի և մարդու էնդեմիկ կորոնավիրուսների (HKU1, OC43, NL63 և 229E): Բակտերիալ հարուցիչների թվում են ***Streptococcus pneumoniae***, ***Haemophilus influenzae***, ատիպիկ ախտածինները (օրինակ՝ ***Legionella pneumophila***, ***Coxiella burnetii***, ***Chlamydia psittaci*** կամ ***pneumoniae***, ***Mycoplasma pneumoniae***):
- 9) շնչառական այլ վարակներով (վիրուսային, բակտերիալ և սնկային) համակցված վարակներ գրանցվել են COVID-19 պացիենտների շրջանում, հետևաբար, COVID-19 հարուցիչի դրական հետազոտման արդյունքը չի բացառում այլ հարուցիչների առկայությունը կամ հակառակը: Ուստի հաստատված COVID-19 վարակով պացիենտը ևս ըստ անհրաժեշտության պետք է հետազոտվի այլ վարակների վերաբերյալ՝ ելնելով երկրում գործող համապատասխան ուղեցույցների և գործելակարգերի:
- 10) երբ հաստատված է կամ կա կասկած գրիպի վիրուսի շրջանառության, անհրաժեշտ է մոլեկուլային հետազոտման մեթոդներով թեստավորել ծանր/ծայրահեղ ծանր ընթացքով պացիենտներին, ինչպես նաև ծանր գրիպի ռիսկի գործոններ ունեցողներին՝ գրիպի վիրուսի վերաբերյալ:

Ձև 3

**Լաբորատոր-գործիքային ախտորոշիչ հետազոտություններ (անհրաժեշտության դեպքում նշել հիվանդության փուլերը)**

| Լաբորատոր հետազոտություններ |      |           |                   |   |          |
|-----------------------------|------|-----------|-------------------|---|----------|
| Հ/Հ                         | Կողը | Անվանումը | Տրամադրման քանակը |   | Արդյունք |
|                             |      |           | ԱԲ                | Բ |          |

|    |            |                                                                                                            |      |   |                                                                                                                                                                                                                                                                                                                                                                     |
|----|------------|------------------------------------------------------------------------------------------------------------|------|---|---------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|
| 1) | Առկա<br>չէ | Նուկլէինաթթվի ամպլիֆիկացիայի<br>թեստեր (SARS-CoV-2 ՊՇՌ)                                                    | 1    | - | Հարուցչի հայտնաբերում                                                                                                                                                                                                                                                                                                                                               |
| 2) | Առկա<br>չէ | SARS-CoV-2 հակազենային (Ag) թեստ<br>(Ըստ անհրաժեշտության, կախված<br>NAAT-ի հասանելությունից)               | 1    | - |                                                                                                                                                                                                                                                                                                                                                                     |
| 3) | Առկա<br>չէ | Տարբեր կենսանյութերի (խորխի)<br>մանրէաբանական հետազոտություն և<br>անտիբիոտիկազգայության որոշում<br>(Vitek) | 0.05 | - | Շնչուղիներից վերցրած նմուշի<br>ցանքսում հայտնաբերվող որոշ<br>մանրէներ կարող են հանդես գալ և<br>որպես ախտածին հարուցիչ, և<br>որպես բերանի խոռոչի/շնչուղիների<br>նորմալ միկրոֆլորայի բաղադրիչ:<br>Հետևաբար, հայտնաբերված<br>մանրէի դերը՝ որպես համակցված<br>վարակի հարուցիչ, կամ նորմալ<br>ֆլորայի մաս, պետք է գնահատվի<br>անհատապես յուրաքանչյուր<br>պացիենտի համար: |
| 4) | Առկա<br>չէ | Մուլտիպլեքս ռեսպիրատոր պանելներ                                                                            | 0.2  | - | Տարբերակիչ ախտորոշում                                                                                                                                                                                                                                                                                                                                               |
| 5) | Առկա<br>չէ | Արյան ընդհանուր հետազոտություն                                                                             | 2.5  | - | Արյան պատկերում<br>ախտաբանական<br>շեղումների<br>հայտնաբերում                                                                                                                                                                                                                                                                                                        |
| 6) | Առկա<br>չէ | Մեզի ընդհանուր հետազոտություն                                                                              | 2    | - | Մեզում շեղված<br>ցուցանիշների<br>հայտնաբերում                                                                                                                                                                                                                                                                                                                       |
| 7) | Առկա<br>չէ | Կրեատինին<br>(երիկամների ֆունկցիոնալ թեստեր)                                                               | 3    | - | Ախտաբանական<br>շեղումների<br>հայտնաբերում                                                                                                                                                                                                                                                                                                                           |
| 8) | Առկա       | Միզանյութ                                                                                                  | 3    |   |                                                                                                                                                                                                                                                                                                                                                                     |

|     |            |                                                                                                                              |      |   |                                |
|-----|------------|------------------------------------------------------------------------------------------------------------------------------|------|---|--------------------------------|
|     | չէ         |                                                                                                                              |      |   |                                |
| 9)  | Առկա<br>չէ | Ընդհանուր բիլիռուբին/ֆրակցիաներ<br>(յարդի ֆունկցիոնալ թեստեր)                                                                | 2.5  |   | Ախտաբանական<br>հայտնաբերում    |
| 10) | Առկա<br>չէ | Ալանինամինոտրանսֆերազ (ԱԼՏ),<br>ասպարտատամինոտրանսֆերազ<br>(ԱՍՏ), գամմագլյուտամիլտրանսֆերազ<br>(ԳԳՏ), հիմնային ֆոսֆատազ (<Ֆ) | 2.5  | - |                                |
| 11) | Առկա<br>չէ | Գլյուկոզ                                                                                                                     | 3    | - | Գլյուկոզի մակարդակի որոշում    |
| 12) | Առկա<br>չէ | Էլեկտրոլիտների (Na <sup>+</sup> , K <sup>+</sup> , Mg <sup>2+</sup> , Ca <sup>2+</sup> )                                     | 3    | - | Էլեկտրոլիտների<br>հայտնաբերում |
| 13) | Առկա<br>չէ | Արյան սպիտակուցների կազմի<br>որոշում/ալբումին                                                                                | 2.5  | - | Ախտաբանական<br>հայտնաբերում    |
| 14) | Առկա<br>չէ | C-ռեակտիվ սպիտակուց (CRP)                                                                                                    | 3    |   |                                |
| 15) | Առկա<br>չէ | Պրոկալցիտոնին                                                                                                                | 0.05 |   |                                |
| 16) | Առկա<br>չէ | D-դիմերի (D-dimer)                                                                                                           | 0.1  |   |                                |
| 17) | Առկա<br>չէ | Ֆերիտին                                                                                                                      | 0.1  |   |                                |
| 18) | Առկա<br>չէ | Լակտատ դեհիդրոգենազ (LDH)                                                                                                    | 0.2  |   |                                |
| 19) | Առկա<br>չէ | Ինտերլեյկին 6 (IL6)                                                                                                          | 0.1  | - |                                |



|     |            |                                                                                                                                                                                                                                                                                                                  |      |   |                                                                                                                  |
|-----|------------|------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|------|---|------------------------------------------------------------------------------------------------------------------|
| 20) | Առկա<br>չէ | Կոագուլոգրամմա՝<br>պրոթոմբինային ժամանակ<br>միջազգային նորմալացված<br>հարաբերակցություն (international<br>normalized ratio)<br>մասնակի թրոմբոպլաստինային<br>ժամանակ<br>Xa գործոնի ինհիբիտորի (anti-factor Xa)<br>մակարդակ<br>(կատարվում է հակամակարդիչների<br>բուժական կամ միջին դեղաչափերի<br>կիրառման դեպքում) | 2    | - |                                                                                                                  |
| 21) | Առկա<br>չէ | Թթվա-հիմնային հավասարակշռություն                                                                                                                                                                                                                                                                                 | 0.2  | - | Թթվա-հիմնային<br>հավասարակշռության<br>խանգարումների հայտնաբերում                                                 |
| 22) | Առկա<br>չէ | Տրոպոնին I-ի որոշում                                                                                                                                                                                                                                                                                             | 0.2  | - | Սրտամկանի սուր վնասման<br>հայտնաբերում: Արդյուքները<br>անհրաժեշտ է համադրել այլ<br>կլինիկական դրսևորումների հետ: |
| 23) | Առկա<br>չէ | Արյան մանրէաբանական<br>հետազոտություն և<br>անտիբիոտիկազգայնության որոշում<br>(Vitek) (իրականացվում է ըստ<br>ցուցումների)                                                                                                                                                                                         | 0.05 | - | -                                                                                                                |
| 24) | Առկա<br>չէ | Գրիպ A, B NAAT թեսթ (ըստ<br>համաճարակային վիճակի և<br>կլինիկական դրսևորումների, թեստերի<br>արդյունքները կարող են պատրաստ<br>լինել 24 ժամվա ընթացքում)                                                                                                                                                            | 0.1  | - | Հարուցչի հայտնաբերում                                                                                            |
| 25) | Առկա       | HBsAg, հակա HCV Ab                                                                                                                                                                                                                                                                                               | 0.2  | - | Հարուցչի հայտնաբերում                                                                                            |

|                                  |            |                                                                                                  |      |   |                                                                                              |
|----------------------------------|------------|--------------------------------------------------------------------------------------------------|------|---|----------------------------------------------------------------------------------------------|
|                                  | չէ         |                                                                                                  |      |   |                                                                                              |
| 26)                              | Առկա<br>չէ | ՄԻԱՎ-ի վերաբերյալ հետազոտություն (HIV Ab1/2)                                                     | 0.5  | - |                                                                                              |
| 27)                              | Առկա<br>չէ | Տուբերկուլյոզի վերաբերյալ հետազոտություն (ՊՇՌ, մանրէաբանական և մանրադիտակային հետազոտություններ) | 0.2  | - |                                                                                              |
| <b>Գործիքային հետազոտություն</b> |            |                                                                                                  |      |   |                                                                                              |
| 28)                              | Առկա<br>չէ | Ռենտգեն հետազոտություն                                                                           | 1    | - | Ախտորոշման ճշտում և թոքային բարդությունների հայտնաբերում կամ բացառում                        |
| 29)                              | Առկա<br>չէ | Կրծքավանդակի համակարգչային տոմոգրաֆիա                                                            | 1    |   |                                                                                              |
| 30)                              | Առկա<br>չէ | Կրծքավանդակի գերձայնային հետազոտություն                                                          | 0.8  |   |                                                                                              |
| 31)                              | Առկա<br>չէ | Որովային օրգանների գերձայնային հետազոտություն                                                    | 0.2  | - | Որովային օրգանների պաթոլոգիաների հայտնաբերում                                                |
| 32)                              | Առկա<br>չէ | Մագնիսառեզոնանսային տոմոգրաֆիա (ներերակային կոնտրաստավորմամբ կամ առանց կոնտրաստավորման)          | 0.05 | - | Սուր նյարդաբանական պաթոլոգիաների հայտնաբերում կամ բացառում                                   |
| 33)                              | Առկա<br>չէ | Էլեկտրասրտագրություն (ԷՍԳ)                                                                       | 1.5  | - | Ախտաբանական փոփոխություններ (ռիթմի խանգարումներ կամ սրտամկանի սնուցման խանգարման նշաններ)    |
| 34)                              | Առկա<br>չէ | Էխո-սրտագրություն                                                                                | 0.3  | - | Սրտի, փականների կառուցվածքային և ֆունկցիոնալ փոփոխություններ, ինչպես նաև սրտապարկում հեղուկի |

|     |         |                                   |           |   |                                                                                            |
|-----|---------|-----------------------------------|-----------|---|--------------------------------------------------------------------------------------------|
|     |         |                                   |           |   | առկայություն: Սիրտ մտնող և սրտից դուրս եկող խոշոր անոթների կառուցվածքային փոփոխություններ: |
| 35) | Առկա չէ | Էլեկտրոնեյրոմիոգրաֆիա             | 0.05      | - | Ծայրամասային նյարդային համակարգի ախտահարման գնահատում                                      |
| 36) | Առկա չէ | Պուլսօքսիմետրիա (ըստ ցուցումների) | Ըստ անհր. | - | Արյան թթվածնով հագեցվածության գնահատում                                                    |

6. Սույն հավելվածի Ձև 3-ում սահմանված՝

1) տրամադրվող քանակների համար նշվում է միջինացված ցուցանիշ, նկատի ունենալով տվյալ հետազոտության իրականացման հաճախականությունը: Հաճախականության հաշվարկման միավորը պետք է լինի 0-ից 1 միջակայքում և հաշվի առնի նմանատիպ 100 դեպքերում տվյալ հետազոտության իրականացման հաճախականությունը:

2) ուղեկցող հիվանդությունների և (կամ) բարդությունների առկայության կամ կասկածի դեպքում ըստ անհրաժեշտության կազմակերպվում է համապատասխան մասնագետի խորհրդատվություն և լաբորատոր-գործիքային ախտորոշիչ հետազոտություններ կամ պացիենտն ուղղորդվում է համապատասխան խորհրդատվության:

7. Օգտագործվող դեղերի ցանկը սահմանվում է ըստ Ձև 4-ի, ընդ որում.

1) Վարակի վաղ փուլում, երբ վիրուսային ծանրաբեռնվածությունը բարձր է, վիրուսային ռեպլիկացիայի դեմ ուղղված պրեպարատները, կլինեն առավել արդյունավետ այս փուլում:

2) Հակավիրուսային թերապիայի ժամանակին մեկնարկը շատ կարևոր է, քանի որ դրանք ավելի արդյունավետ են, երբ տրվում են ախտանշանների սկզբից 5-ից 7 օրվա ընթացքում:

3) Միջին ծանրության COVID-19-ով (առանց հիպօքսիայի) հոսպիտալացված պացիենտներին խորհուրդ է տրվում.

ա. Ռեմդեսիվիր 3 օր, եթե պացիենտը ունի ռիսկի գործոններ և եթե ախտանիշների ի հայտ գալուց հետո չի անցել 7 օրից ավել,

բ. Համակարգային ստերոիդները ապացուցված օգուտ չունեն և կարող են վնասել, միջին ծանրության ընթացքի դեպքում, երբ չկա հիվանդության առաջընթաց

գ. Կոնվալեսցենտ պլազմայի, հիդրօքսիքլորոքսոֆինի, ազիտրոմիցինի, լոպինավիր/րիտոնավիրի կամ իվերմեկտինի համար ռանդոմիզացված կլինիկական հետազոտությունները որևէ օգուտ չեն ցուցադրել, ուստի դրանց կիրառումը խորհուրդ չի տրվում

4) Կարելի է դիտարկել միջին ծանրության COVID-19-ով պացիենտների մոտ, ովքեր հոսպիտալացվել են այլ ցուցումներով.

ա. Նիոմատոելվիր/ռիտոնավիր 5 օր (per os),

բ. Ռեմդեսիվիր x 3 օր (ներերակային),

գ. Համակարգային ստերոիդները ապացուցված օգուտ չունեն և կարող են վնասել,

դ. Հիդրօքսիքլորոքսինի, ազիտրոմիցինի, լոպինավիրի/ռիտոնավիրի կամ իվերմեկտինի համար որևէ օգուտ չի ցուցադրվել,

#### **5) Թրոմբոէմբոլիաների կանխարգելում.**

ա. COVID-19-ով հոսպիտալացված պացիենտների շրջանում կիրառել հակամակարդիչների կանխարգելիչ, այլ ոչ թե միջին կամ թերապևտիկ դեղաչափեր՝ բացառությամբ այն դեպքերի, երբ ցուցված է ավելի բարձր դեղաչափերով բուժում,

բ. Հակամակարդիչները անհրաժեշտ է նշանակել հաշվի առնել արյունահոսության ռիսկերը և այլ հակացուցումները,

գ. Հակամակարդիչները ստանդարտ կանխարգելիչ դեղաչափով ստացող պացիենտներին մոնիտորինգ անհրաժեշտ չէ, բացառությամբ թրոմբոցիտների քանակի մոնիտորինգի՝ 5-7 օր հետո, եթե ոչ ֆրակցիոն հեպարին է օգտագործվում,

դ. Դեղաչափը պետք է հաշվարկվի ըստ մարմնի քաշի/ՄՁԻ-ի և երիկամների ֆունկցիայի: Օրինակ, երիկամային անբավարարության առկայության դեպքում պացիենտը պետք է ստանա ոչ ֆրակցիոն հեպարին կամ նվազեցված դեղաչափով ցածր-մոլեկուլյար հեպարին,

ե. Հակամակարդիչները բուժական դեղաչափերով նշանակելիս կլինիկական մասնագետները պետք է հիշեն արյունահոսության ավելի բարձր ռիսկի մասին՝ ինչպես ծանր արյունահոսության (օրինակ՝ ստամոքս-աղիքային ուղի), որի դեպքում պացիենտը արյան փոխներարկման կարիք է ունենում, այնպես էլ կլինիկորեն նշանակալից արյունահոսության (օրինակ՝ ներգանգային), նույնիսկ եթե այն արյան փոխներարկում չի պահանջում: Նշված ռիսկերը կարող են առաջանալ նաև հակամակարդիչների միջին դեղաչափերի պարագայում, հատկապես արյունահոսության այլ ռիսկի գործոնների առկայության դեպքում,

զ. Հեպարինով հարուցված թրոմբոցիտոպենիայով պայմանավորված թրոմբոզի առաջացման ռիսկը առկա է նաև ոչ ֆրակցիոն հեպարինի և, ավելի հազվադեպ, ցածր-մոլեկուլյար հեպարինի կիրառման դեպքում,

է. Բուժական և միջին դեղաչափերով կիրառվող հակամակարդիչները ներառում են ցածր-մոլեկուլյար հեպարինը, ոչ ֆրակցիոն հեպարինը, ուղղակի ազդեցության ներքին ընդունման հակամակարդիչները կամ ֆոնդապարինուքսը,

ը. Դեղի ընտրության վրա ազդող գործոնների թվում են լաբորատոր մոնիտորինգի հնարավորությունը (անհրաժեշտ է ոչ ֆրակցիոն հեպարինի համար), ազդեցության՝ արագ դարձելի լինելու պահանջը (նախապատվությունը տրվում է ոչ ֆրակցիոն հեպարինին), երիկամների ծանր դիսֆունկցիայի առկայությունը (գերադասելի է ոչ ֆրակցիոն հեպարինը), փոխազդեցությունը COVID-19-ի բուժման ժամանակ կիրառվող այլ դեղերի (հատկապես ներքին ընդունման ուղղակի հակամակարդիչների) հետ, հարմարավետություն (ամենից ցածր է ոչ ֆրակցիոն հեպարինի դեպքում, առավելագույնը՝

ներքին ընդունման ուղղակի հակամակարդիչների դեպքում) և հեպարինով հարուցված թրոմբոցիտոպենիայի կասկածը (նախընտրելի է ֆոնդապարինուքսը կամ ուղղակի ազդեցության ներքին ընդունման հակամակարդիչները),

թ. Հակամակարդիչների բուժական կամ միջին դեղաչափերի կիրառման դեպքում անհրաժեշտ է կատարել հետևյալ լաբորատոր հետազոտությունները՝ ցուցանիշների ելակետային մակարդակները որոշելու համար. կրեատինին, թրոմբոցիտների քանակ, պրոթոմբինային ժամանակ կամ միջազգային նորմալացված հարաբերակցություն (international normalized ratio), ինչպես նաև մասնակի թրոմբոպլաստինային ժամանակ: Ոչ ֆրակցիոն հեպարինի բուժական դեղաչափերով բուժվող պացիենտները պահանջում են մոնիտորինգ՝ մասնակի թրոմբոպլաստինային ժամանակի կամ Xa գործոնի ինհիբիտորի (anti-factor Xa) մակարդակների և, իդեալական պայմաններում, նաև թրոմբոցիտների քանակի: Վարֆարին ստացող պացիենտների մոտ անհրաժեշտ է վերահսկել միջազգային նորմալացված հարաբերակցությունը,

### **6) Հակաբակտերիալ թերապիա.**

ա. Կասկածելի կամ հաստատված միջին ծանրության COVID-19-ով պացիենտներին հակաբիոտիկներ չեն նշանակվում, քանի դեռ մանրէային վարակի կլինիկական կասկած չկա,

բ. Մանրէային վարակի կլինիկական կասկածի դեպքում թոքաբորբի հակաբիոտիկաթերապիան պետք է իրականացվի՝ համաձայն Հայաստանի Հանրապետության Առողջապահության նախարարի 2019 թվականի հունիս 10-ի թիվ 1529-Լ հրամանով սահմանված հակաբիոտիկների ընտրության չափորոշիչների,

գ. Համակցված վարակի ժամանակ հակաբիոտիկների ակտիվ օգտագործումը կարող է առաջացնել կողմնակի ազդեցություններ, ինչպիսիք են Clostridioides difficile վարակները՝ կլինիկական տարբեր ախտանիշներով (փորլուծությունից ու տենդից մինչև կոլիտ),

դ. Ընդունման պահին էմպիրիկ հակաբիոտիկների սկսելը և շարունակելը կարող է հանգեցնել սուպերինֆեկցիաների, որոնք հակաբիոտիկների նկատմամբ կայուն են. Մեկ ուսումնասիրություն ցույց է տվել, որ հակաբիոտիկների օգտագործումը COVID-19-ի ընդունման առաջին երկու օրերին հանդիսանում է սուպերինֆեկցիայի ռիսկի գործոն,

ե. Սեզոնային գրիպի վիրուսի կասկածվող կամ հաստատված շրջանառության դեպքում, ծանր պացիենտներին և ծանր գրիպի զարգացման առումով բարձր ռիսկայնության պացիենտներին ցուցված է նեյրամինիդազայի ինհիբիտորներով (օրինակ՝ օզելտամիվիր) էմպիրիկ բուժում, որն անհրաժեշտ է հնարավորինս վաղ սկսել,

զ. Տուբերկուլոզի հետ համակցված վարակի կասկածվող կամ հաստատված դեպքերի բուժումն իրականացվում է համաձայն տուբերկուլոզի դեմ պայքարի կլինիկական ուղեցույցների.

### **7) Ուղեկցող հիվանդությունների բուժում,**

ա. COVID-19 պացիենտները, ովքեր ստանում են միաժամանակ ուղեկցող վիճակների բուժման համար դեղեր (օրինակ՝ ստատիններ, ոչ ստերոիդային հակաբորբոքային դեղեր, անգիոտենզին փոխակերպող ֆերմենտի [ACE] արգելակիչներ (ինհիբիտորներ), անգիոտենզին ընկալիչների արգելակիչներ, համակարգային կամ ինհալյացիոն կորտիկոստերոիդներ) չպետք է դադարեցնեն այդ դեղերի օգտագործումը:

**Օգտագործվող դեղերի ցանկը (անհրաժեշտության դեպքում նշել հիվանդության փուլերը)**

| Հ/հ | Անվանում,<br>դեղաչափ, դեղաձև,<br>փաթեթավորում                                                                                                                                                                                             | Անվանում<br>/ջեներիկ/                                                                                                                                                                                                                               | Զ/Մ   | Միջինացված<br>ցուցանիշ՝<br>տրամադրման<br>հաճախականությ<br>ուն | Միջին<br>օրական<br>չափաքանա<br>կ                                                            | Բուժման<br>կուրսի<br>միջին<br>չափաքան<br>ակ | Օրերի<br>քանակ     |
|-----|-------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|-----------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|-------|---------------------------------------------------------------|---------------------------------------------------------------------------------------------|---------------------------------------------|--------------------|
| 1)  | Նատրիումի քլորիդ,<br>կալիումի քլորիդ,<br>կալցիումի քլորիդ<br>(կալցիումի քլորիդի<br>դիհիդրատ) լուծույթ<br>կաթիլաներարկման<br>8,6մգ/մլ+0,3մգ/մլ+0,<br>33մգ/մլ; 100մլ,<br>200մլ, 250մլ, 500մլ<br>պլաստիկ փաթեթ,<br>1000մլ, 2000մլ,<br>3000մլ | Նատրիումի<br>քլորիդ, կալիումի<br>քլորիդ, կալցիումի<br>քլորիդ (կալցիումի<br>քլորիդի<br>դիհիդրատ)<br>լուծույթ<br>կաթիլաներարկմ<br>ան<br>8,6մգ/մլ+0,3մգ/մլ<br>+0,33մգ/մլ; 100մլ,<br>200մլ, 250մլ,<br>500մլ պլաստիկ<br>փաթեթ, 1000մլ,<br>2000մլ, 3000մլ | փաթեթ | Ըստ պահանջի                                                   | Ըստ<br>պահանջի<br>(հաշվի<br>առնելով<br>կորուստները<br>և<br>էլեկտրոլիտն<br>երի<br>մակարդակը) | Ըստ<br>պահանջի                              | Ըստ<br>պահանջ<br>ի |
| 2)  | Նատրիումի քլորիդի<br>լուծույթ 0.9%<br>Նատրիումի քլորիդ<br>լուծույթ<br>կաթիլաներարկման<br>9մգ/մլ; 50մլ, 100մլ,<br>200մլ, 250մլ, 400մլ,                                                                                                     | Նատրիումի<br>քլորիդի լուծույթ<br>0.9% Նատրիումի<br>քլորիդ լուծույթ<br>կաթիլաներարկմ<br>ան 9մգ/մլ;<br>50մլ, 100մլ, 200մլ,                                                                                                                            | փաթեթ | Ըստ պահանջի                                                   | Ըստ<br>պահանջի<br>(հաշվի<br>առնելով<br>կորուստները<br>և<br>էլեկտրոլիտն<br>երի               | Ըստ<br>պահանջի                              | Ըստ<br>պահանջ<br>ի |

|    |                                                                                                                                                                            |                                                                                                                                                                            |           |             |                |                |                    |
|----|----------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|----------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|-----------|-------------|----------------|----------------|--------------------|
|    | 500մլ, 1000մլ,<br>2000մլ, 3000մլ                                                                                                                                           | 250մլ, 400մլ,<br>500մլ, 1000մլ,<br>2000մլ, 3000մլ                                                                                                                          |           |             | մակարդակը)     |                |                    |
| 3) | Պարացետամոլ<br>500մգ                                                                                                                                                       | Պարացետամոլ<br>500մգ                                                                                                                                                       | դեղահատեր | Ըստ պահանջի | Ըստ<br>պահանջի | Ըստ<br>պահանջի | Ըստ<br>պահանջ<br>ի |
| 4) | Պարացետամոլ<br>500մգ                                                                                                                                                       | Պարացետամոլ<br>500մգ                                                                                                                                                       | դեղահատեր | Ըստ պահանջի | Ըստ<br>պահանջի | Ըստ<br>պահանջի | Ըստ<br>պահանջ<br>ի |
| 5) | Մետամիզոլ<br>(մետամիզոլ<br>նատրիում),<br>պիտոֆենոն<br>(պիտոֆենոնի<br>հիդրոքլորիդ),<br>ֆենպիվերինիում<br>բրոմիդ լուծույթ<br>մ/մ ներարկման<br>500մգ/մլ+2մգ/մլ+0,0<br>2մգ/մլ; | Մետամիզոլ<br>(մետամիզոլ<br>նատրիում),<br>պիտոֆենոն<br>(պիտոֆենոնի<br>հիդրոքլորիդ),<br>ֆենպիվերինիում<br>բրոմիդ լուծույթ<br>մ/մ ներարկման<br>500մգ/մլ+2մգ/մլ+<br>0,02մգ/մլ; | ամպուլներ | Ըստ պահանջի | Ըստ<br>պահանջի | Ըստ<br>պահանջի | Ըստ<br>պահանջ<br>ի |
| 6) | Իբուպրոֆեն<br>200մգ,400մգ,600մգ                                                                                                                                            | Իբուպրոֆեն<br>200մգ,400մգ,600<br>մգ                                                                                                                                        | դեղահատեր | Ըստ պահանջի | Ըստ<br>պահանջի | Ըստ<br>պահանջի | Ըստ<br>պահանջ<br>ի |
| 7) | Դիկլոֆենակ<br>(դիկլոֆենակ<br>նատրիում) 50մգ,<br>1010մգ                                                                                                                     | Դիկլոֆենակ<br>(դիկլոֆենակ<br>նատրիում) 50մգ,<br>1010մգ                                                                                                                     | դեղահատեր | -           | -              | -              | -                  |
| 8) | Մուկոլիտիկներ՝<br>ացետիլցիստեին և<br>այլ                                                                                                                                   | ՀՀ-ում գրանցված<br>ջեներիկներ                                                                                                                                              |           | Ըստ պահանջի | Ըստ<br>պահանջի | Ըստ<br>պահանջի | Ըստ<br>պահանջ<br>ի |

Ստանդարտ տրոմբոպրոֆիլակտիկա

|     |                                                                                          |                                                                                                |                       |                                                                                                                                                                                    |                                                                                                      |                                                                                           |                                                               |
|-----|------------------------------------------------------------------------------------------|------------------------------------------------------------------------------------------------|-----------------------|------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|------------------------------------------------------------------------------------------------------|-------------------------------------------------------------------------------------------|---------------------------------------------------------------|
| 9)  | Էնօքսապարին<br>(Էնօքսապարին<br>նատրիում) լուծույթ<br>ներարկման 4000<br>անտի-Xa ՄՄ/0,4մլ; | Էնօքսապարին<br>(Էնօքսապարին<br>նատրիում)<br>լուծույթ<br>ներարկման 4000<br>անտի-Xa<br>ՄՄ/0,4մլ; | ներարակիչն<br>եր      | յուրաքանչյուր 24<br>ժամը մեկ անգամ<br><br>Եթե ՄՁԻ-ն > 40<br>կգ/մ2 կամ քաշը ><br>120 կգ.<br>Էնօքսիպարին 40<br>մգ ենթամաշկային<br>ներարկմամբ,<br>յուրաքանչյուր 12<br>ժամը մեկ անգամ: | 40-80 մգ                                                                                             | Կախված<br>հիվանդա<br>նոցային<br>բուժման<br>տևողությո<br>ւնից                              | մինչև<br>պացիեն<br>տի՝<br>հիվանդ<br>անոցից<br>դուրսգրվ<br>ելն |
| 10) | Հեպարին (հեպարին<br>նատրիում) լուծույթ<br>ն/ե և ե/մ<br>ներարկման<br>5000ՄՄ/մլ;           | Հեպարին<br>(հեպարին<br>նատրիում)<br>լուծույթ ն/ե և ե/մ<br>ներարկման<br>5000ՄՄ/մլ;              | ապակե<br>սրվակ        | յուրաքանչյուր 8<br>կամ 12 ժամը մեկ<br>անգամ<br><br>Եթե ՄՁԻ-ն > 40<br>կգ/մ2 կամ քաշը ><br>120 կգ. 7500<br>միավոր, 12 ժամը<br>մեկ անգամ, կամ<br>5000 միավոր, 8<br>ժամը մեկ անգամ:    | 5000-7500<br>միավոր                                                                                  | Կախված<br>օրական<br>դեղաչափ<br>ից և<br>հիվանդա<br>նոցային<br>բուժման<br>տևողությո<br>ւնից | մինչև<br>պացիեն<br>տի՝<br>հիվանդ<br>անոցից<br>դուրսգրվ<br>ելն |
| 11) | Տինգապարին<br>նատրիում լուծույթ<br>ներարկման 20.000<br>ՄՄ/մլ                             | Տինգապարին<br>նատրիում լուծույթ<br>ներարկման<br>20.000 ՄՄ/մլ                                   | նախալցված<br>ներարկիչ | Օրը 1 անգամ                                                                                                                                                                        | 4500<br>միավոր/օրը<br>եթե ՄՁԻ<<br>40 կգ/մ2<br>կամ քաշը <<br>120 կգ;<br><br>9000<br>միավոր/օրը<br>եթե | Կախված<br>օրական<br>դեղաչափ<br>ից և<br>հիվանդա<br>նոցային<br>բուժման<br>տևողությո<br>ւնից | մինչև<br>պացիեն<br>տի՝<br>հիվանդ<br>անոցից<br>դուրսգրվ<br>ելն |



|     |                                                                              |                                                                                         |                       |                            |                                                                                                                                                  |                                                                                           |                                                               |
|-----|------------------------------------------------------------------------------|-----------------------------------------------------------------------------------------|-----------------------|----------------------------|--------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|-------------------------------------------------------------------------------------------|---------------------------------------------------------------|
|     |                                                                              |                                                                                         |                       |                            | ՄՁԻ>40<br>կգ/մ2 կամ<br>քաշը >120<br>կգ;                                                                                                          |                                                                                           |                                                               |
| 12) | Դալտեպարին<br>լուծույթ ներարկման<br>2500 ՄՄ/0,2մլ,<br>5000 ՄՄ/0,2մլ          | Դալտեպարին<br>լուծույթ<br>ներարկման 2500<br>ՄՄ/0,2մլ, 5000<br>ՄՄ/0,2մլ                  | ամպուլներ             | 1-2 անգամ,<br>կախված քաշից | 5000<br>միավոր/օրը<br>BMI < 40<br>կգ/մ2 կամ<br>քաշը < 120<br>կգ; 5000<br>միավոր 12<br>ժամը մեկ,<br>եթե BMI > 40<br>կգ/մ2 կամ<br>քաշ > 120<br>կգ. | Կախված<br>օրական<br>դեղաչափ<br>ից և<br>հիվանդա<br>նոցային<br>բուժման<br>տևողությո<br>ւնից | մինչև<br>պացիեն<br>տի՝<br>հիվանդ<br>անոցից<br>դուրսգրվ<br>ելն |
| 13) | Ֆոնդապարինուքս<br>(Ֆոնդապարինուքս<br>նատրիում) լուծույթ<br>ներարկման 5մգ/մլ; | Ֆոնդապարինուք<br>ս<br>(ֆոնդապարինուք<br>ս նատրիում)<br>լուծույթ<br>ներարկման<br>5մգ/մլ; | նախալցված<br>ներարկիչ | 1 անգամ                    | 2.5 մգ<br>ենթամաշկայ<br>ին<br>ներարկմամբ<br>յուրաքանչյու<br>ր 24 ժամը                                                                            | Կախված<br>օրական<br>դեղաչափ<br>ից և<br>հիվանդա<br>նոցային<br>բուժման<br>տևողությո<br>ւնից | մինչև<br>պացիեն<br>տի՝<br>հիվանդ<br>անոցից<br>դուրսգրվ<br>ելն |

#### Հակավիրուսային բուժում

14) Միջին ծանրության COVID-19-ով արտահիվանդանոցային պայմաններում բուժում ստացող պացիենտները, ովքեր ունեն բարձր ռիսկ ծանր հիվանդության առաջընթացի համար, ըստ IDSA-ի ուղեցույցի առաջարկվում է **նիրմատրեվիր/րիտոնավիր** սկսել ախտանիշների սկզբից **5 օրվա** ընթացքում:

ա. Պացիենտների կողմից ընդունվող բոլոր դեղերը պետք է գնահատվեն նիրմատրեվիր/րիտոնավիրի հետ փոխազդեցության վերաբերյալ: Դեղորայքային փոխազդեցությունները կարող են հանգեցնել բուժման ձախողման կամ ծանր, կյանքին

|                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                            |
|------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|
| <p>սպառնացող կամ մահացու ելքերի:</p> <p>բ. Դեղաչափը կախված է երիկամային ֆունկցիայից՝</p> <ol style="list-style-type: none"> <li>1. eGFR &gt; 60 մլ/րոպե՝ 300 մգ նիրմատրեվիր/100 ռիտոնավիր յուրաքանչյուր 12 ժամը հինգ օրվա ընթացքում</li> <li>2. eGFR ≤60 մլ/րոպե և ≥30 մլ/րոպե. 150 մգ նիրմատրեվիր/100 մգ ռիտոնավիր յուրաքանչյուր 12 ժամը հինգ օրվա ընթացքում</li> <li>3. eGFR &lt;30 մլ/րոպե. խորհուրդ չի տրվում</li> </ol> <p>գ. Թեթև և միջին ծանրության COVID-19-ով պացիենտները, ովքեր ունեն ծանր ընթացքի ռիսկի գործոններ և հոսպիտալացված են, կարող են նույնպես ստանալ նիրմատրեվիր/րիտոնավիր</p>                                                        |
| <p>15) Ամերիկայի Ինֆեկցիոն Հիվանդությունների Հասարակության COVID-19 բուժման և վարման ուղեցույցն առաջարկում է ա. Թեթևից միջին ծանրության COVID-19 ունեցող պացիենտների շրջանում (արտահիվանդանոցային կամ հիվանդանոցային պայմաններում), ովքեր ունեն ծանր հիվանդության առաջընթացի բարձր ռիսկ, առաջարկվում է <b>ռեմդեսիվիրը</b> սկսել ախտանիշների ի հայտ գալուց 7 օրվա ընթացքում:</p> <p>բ. Թեթև և միջին ծանրության COVID-19-ի դեպքում ռեմդեսիվիրի դեղաչափը 200 մգ է առաջին օրը, որին հաջորդում է 100 մգ երկրորդ և երրորդ օրերին:</p> <p>գ. Ռեմդեսիվիրը ը պետք է կիրառվի ախտանշանների ի հայտ գալուց հետո որքան հնարավոր է շուտ, իդեալականը 7 օրվա ընթացքում:</p> |

8. Սույն հավելվածի Ձև 4–ում սահմանված՝

1) նշանակված դեղի նկատմամբ անհատական անտանելիության դեպքում ավագ բուժաշխատողը իրավասու է նշանակել այլ դեղ.

2) տրամադրվող քանակների համար նշվում է միջինացված ցուցանիշ, նկատի ունենալով տվյալ դեղի օգտագործման հաճախականությունը: Հաճախականության հաշվարկման միավորը պետք է լինի 0-ից 1 միջակայքում և հաշվի առնի նմանատիպ 100 դեպքերում տվյալ դեղի օգտագործման հաճախականությունը:

9. Բուժական այլ միջոցառումներ սահմանվում են Ձև 5–ում (անհրաժեշտության դեպքում անհրաժեշտ է նշել հիվանդության փուլերը).

**Ձև 5**

**Բուժական այլ միջոցառումներ  
(անհրաժեշտության դեպքում նշել հիվանդության փուլերը)**

| Հ/հ | Բժշկական ծառայության տեսակը | Տրամադրման քանակը |   |
|-----|-----------------------------|-------------------|---|
|     |                             | ԱԲ                | Բ |

|    |                             |   |   |
|----|-----------------------------|---|---|
| 1) | Երակային կաթետերի տեղադրում | 3 | - |
|----|-----------------------------|---|---|

#### 10. Սույն հավելվածի Ձև 5-ում սահմանված՝

1) տրամադրվող քանակների համար նշվում է միջինացված ցուցանիշ, նկատի ունենալով, թե ինչ հաճախականությամբ է իրականացվում տվյալ բուժական միջոցառումը: Հաճախականության հաշվարկման միավորը պետք է լինի 0-ից 1 միջակայքում և հաշվի առնի նմանատիպ 100 դեպքերում տվյալ բուժական միջոցառման կիրառման հաճախականությունը.

2) ուղեկցող հիվանդությունների և (կամ) բարդությունների առկայության կամ կասկածի դեպքում ըստ անհրաժեշտության իրականացվում են համապատասխան բուժական միջոցառումներ:

### ԳՈՐԾԵԼԱԿԱՐԳԻ ՄՇԱԿՄԱՆ ԱՂԲՅՈՒՐԸ

1. Clinical Management Of COVID-19 Living Guideline 18 August 2023 © World Health Organization 2023 Accessed 20 December 2023./Կլինիկական կառավարում COVID-19 կյանքի ուղեցույց 18 օգոստոսի 2023 © Առողջապահության համաշխարհային կազմակերպություն 2023 Մուտք գործվել է 2023 թվականի դեկտեմբերի 20-ին:
2. Therapeutics And COVID-19 LIVING GUIDELINE 14 JULY 2022. © World Health Organization 2022 Accessed 20 December 2023./ Թերապևտիկ միջոցներ և COVID-19 ԱՊՐԵԼՈՒ ՈՒՂԵՑՈՒՅՑ 14 ՀՈՒԼԻՍԻ 2022թ.
3. Clinical care for severe acute respiratory infection: toolkit, update 2022. COVID-19 adaptation. © World Health Organization 2022/Կլինիկական խնամք սուր շնչառական վարակի համար. © Առողջապահության համաշխարհային կազմակերպություն 2022թ.
4. Bhimraj A, Morgan RL, Shumaker AH, Baden L, Cheng VC, Edwards KM, Gallagher JC, Gandhi RT, Muller WJ, Nakamura MM, O'Horo JC, Shafer RW, Shoham S, Murad MH, Mustafa RA, Sultan S, Falck-Ytter Y. Infectious Diseases Society Of America Guidelines On The Treatment And Management Of Patients With COVID-19. Infectious Diseases Society Of America 2023; Version 11.0.0. Available /Աթ Բիմրաժ, Ա. Մորգան ՌԼ, Շումակեր ԱՀ, Լ. Քենգ ՎՇ, Էդվարդս ԿՄ, Գալլաքի ՋԿ, Գանդի ՐԹ, Մյուլլեր ՎՋ, Նակամուրա ՄՄ, Օ'Հորո ՋԿ, Շաֆեր ՐՎ, Շոհամ Տ, Մուրադ ՄԽ, Մուսթաֆա ՐԱ, Տուլտան Տ, Ֆալկ-Կիտեր Կ. Infectious Diseases Society Of America Guidelines On The Treatment And Management Of Patients With COVID-19. Infectious Diseases Society Of America 2023; Version 11.0.0. Available /Աթ Բիմրաժ, Ա. Մորգան ՌԼ, Շումակեր ԱՀ, Լ. Քենգ ՎՇ, Էդվարդս ԿՄ, Գալլաքի ՋԿ, Գանդի ՐԹ, Մյուլլեր ՎՋ, Նակամուրա ՄՄ, Օ'Հորո ՋԿ, Շաֆեր ՐՎ, Շոհամ Տ, Մուրադ ՄԽ, Մուսթաֆա ՐԱ, Տուլտան Տ, Ֆալկ-ԻթթերԱմերիկայի ինֆեկցիոն հիվանդությունների հասարակության ուղեցույցները COVID-19-ով պացիենտների բուժում և կառավարում. Ամերիկայի վարակիչ հիվանդությունների հասարակություն 2023; Տարբերակ 11.0.0.' <https://Www.idsociety.Org/Practice-Guideline/Covid-19-Guideline-Treatment-And-Management/>. Accessed 22 December 2023.
5. Infectious Diseases Society of America Guidelines on the Treatment and Management of Patients with COVID-19./ Ամերիկայի ինֆեկցիոն հիվանդությունների հասարակության ուղեցույցներ COVID-19-ով պացիենտների բուժման և կառավարման վերաբերյալ. Տպագրված IDSA (ԱյԴԻԷսԷյ), 5/27/2021թ. Վերջին թարմացում, 8/12/2024թ.

6. Առողջապահության նախարարի 21.01.2021թ. թիվ 126-Լ հրամանով հաստատված «Մեծահասակների մոտ նոր կորոնավիրուսային վարակի (COVID-19) վարման կլինիկական ուղեցույց»
7. Առողջապահության նախարարի 24.09.2021թ. թիվ 3526-Լ հրամանով հաստատված «Հիվանդանոցային պայմաններում կորոնավիրուսային հիվանդությամբ (COVID-19) պացիենտների վարման կլինիկական ուղեցույցը և ալգորիթմներ»
8. Առողջապահության նախարարի 22.12.2021թ. թիվ 5107-Լ հրամանով հաստատված հիվանդանոցային պայմաններում կորոնավիրուսային հիվանդությամբ (COVID-19) պացիենտների բժշկական օգնությունը և սպասարկումն իրականացնող կազմակերպություններում իրականացվող լաբորատոր-գործիքային ախտորոշիչ հետազոտությունների նվազագույն ծավալները, կորոնավիրուսային հիվանդությամբ (covid-19) պացիենտների դուրսգրման կարգ
9. <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=142622>
10. Smith L, Karaba SM, Amoah J, et al. Hospital-acquired infections among adult patients admitted for coronavirus disease 2019 (COVID-19). Infect Control Hosp Epidemiol 2021: 1-4./ Սմիթ Լ. Կարաբա ՍՄ, Ամոահ Յ և այլք: Կորոնավիրուսային հիվանդությամբ ընդունված չափահաս հիվանդների շրջանում հիվանդանոցային ինֆեկցիաներ. 2019 (COVID-19)